

**ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ  
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**





**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ**

**Բաց Բաժնետիրական Ընկերություն**


**ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am  
Հաշվետվություն թիվ 127, 05.10.2016թ.**

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝	բաժնետոմս,	պարտատոմս	պարտատոմս
արժեթղթերի քանակը՝	1,277,501 հատ,	40,000 հատ	240.000 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	5,000 ՀՀ դրամ,	10,000 ՀՀ դրամ	25 ԱՄՆ դոլար

“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:

<b>ստորագրող անձինք՝</b>	<b>Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ</b>		<b>05.10.16</b>
<b>Կարեն Հակոբյան</b>		(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
<b>Զարուհի Մելքոնյան</b>	<b>Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ</b>		<b>05.10.16</b>
		(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
<b>Սուրեն Կարապետյան</b>	<b>Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ</b>		
		(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
<b>Տիգրան Գալստյան</b>	<b>Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ</b>		<b>05.10.16</b>
		(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
<b>Բագրատ Ճզմաչյան</b>	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b>		<b>05.10.16</b>
		(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		
<b>Դավիթ Հարությունյան</b>	<b>Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ</b>		
		(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		

Ստորագրությունները հավաստում են՝

<b>Աշոտ Օսիպյան</b>	<b>Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն</b>		<b>05.10.16</b>
		(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)		



05 հոկտեմբեր 2016 թ.

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 12/01Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):



ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – N 12 /01L

Դաս: ՀՊ

«04» հոկտեմբերի 2016թ.

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից դ) կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21<sup>6</sup>-ի 1-ին մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ (այսուհետ՝ ժողով) 2016 թվականի նոյեմբերի 08-ին՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:
2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2016 թվականի հոկտեմբերի 04-ը:
3. Որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2016 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ ժողովի հաստատմանը ներկայացնել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությանը:
4. Հաստատել ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
5. Ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 6-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում ([www.araratbank.am](http://www.araratbank.am)):
8. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:
9. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2016 թվականի նոյեմբերի 08-ին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ

Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝  
Աշխատակազմի ղեկավար



 Մ.Ուզունյան